ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ ՆՎԻՐՎԱԾ ԲԱՐԻԻ ԺՈՂՈՎԻ 900-ԱՄՅԱԿԻՆ

Սույն թվականի սեպտեմբերի 30-ից հոկտեմբերի 3-ը Իտալիայի Բարի քաղաքում տեղի ունեցան Բարիի ժողովի (1098) 900-ամյակին նվիրված հոբելյանական հանդիսություններ՝ Բարիի արքեպիսկոպոսարանի և Ս. Նիկողայոս տաճարի վանահայրության հովանավորությամբ:

Տիեզերահռչակ սուրբի՝ Նիկողայոսի աճյունները կրող քաղաքում 900 տարի առաջ առաջին անգամ փորձ արվեց հաջտեցնել Լատին և Հույն Եկեղեցիներին՝ 1045 թվականի տխուր և ողբերգական բաժանումից հետո: Ցավոք, ժողովն այդ հարցում հաջողություն չարձանագրեց, սակայն պատմության մեջ մտավ որպես բարի կամքի առաջին արտահայտություններից մեկը, որպես գոյություն ունեցող տարակարծությունները երկխոսությամբ լուծելու փորձ:

Այդ ժողովի 900-ամյակի առթիվ Բարիի արքեպիսկոպոսարանի և Ս. Նիկողայոս տաճարի վանահայրության կողմից պատրաստվել էին հոբելյանական հանդիսություններ, որոնք ներառնում էին գիտաժողովներ, ցուցահանդեսներ, համերգներ, էկումենիկ աղոթքներ: Չորս օրերի ընթացքում տարբեր զեկուցումներում վեր հանվեցին Բարիի ժողովի պատմական ենթահողը, ջարժառիթները, դրական ազդեցությունները և ձախողման պատճառները:

Հոբելյանական հանդիսություններն ավարտվեցին հոկտեմբերի 3-ի երեկոյան՝ էկումենիկ աղոթքով, որին նախագահում էր Բարիի արքեպիսկոպոս Մարիանո Մագրասսին:

Հանդիսություններին հրավիրված էին Ուղղափառ գրեթե բոլոր Եկեղեցիների ներկայացուցիչները: Հանուն Հայ Առաքելական Եկեղեցու սույն հոբելյանական արարողություններին իր մասնակցությունը բերեց Մինքայել ծ. վրդ. Աջապահյանը: